

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», ««Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքում լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-133-08.05.2019,17.06.2019-ՊԻ) վերաբերյալ կառավարության առաջարկությունները:

1. «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 5-րդ հոդվածով լրացվող 146-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությանը վերապահված ինքնավար մարմնի անդամի թափուր պաշտոնում օրենքով սահմանված ժամկետում թեկնածու չի առաջադրվում, ապա այդ պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունքն անցնում է Ազգային ժողովի կառավարող խմբակցությանը: Այս կապակցությամբ գտնում ենք, որ նույն մոտեցումն անհրաժեշտ է կիրառել սահմանված ժամկետում ոչ միայն ընդդիմադիր խմբակցության կողմից թեկնածու չառաջադրելու դեպքերի համար, այլև այն դեպքերի, երբ սահմանված ժամկետում թեկնածու չեն առաջադրում այդ իրավասությունն ունեցող մյուս մարմինները՝ այդ դեպքում ևս թեկնածու առաջադրելու իրավունքը համապատասխանաբար փոխանցելով հերթական հաջորդ մարմնին: Նշված առաջարկությունը վերաբերում է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ

կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով նախատեսվող նույնաբովանդակ կարգավորումներին:

2. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերով սահմանվում է, որ հանձնաժողովի նախագահի թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու իրավունք ունի Կառավարությունը: Հանձնաժողովի մյուս անդամների թափուր պաշտոններում թեկնածու առաջադրելու իրավունք ունեն հաջորդաբար՝ Կառավարությունը, Ազգային ժողովի կառավարող խմբակցությունը և Ազգային ժողովի ընդդիմադիր խմբակցությունը: Նշված կարգավորումից պարզ չէ՝ արդյոք թեկնածու առաջադրելու՝ վերը սահմանված հաջորդականությունը վերաբերում է համապատասխան մարմնի կողմից առաջադրված թեկնածուի՝ Ազգային ժողովի կողմից չընտրվելու դեպքին, թե՝ առաջադրված թեկնածուի ընտրվելուց հետո հաջորդ թափուր պաշտոնում թեկնածու առաջադրելու դեպքին: Կամ, արդյո՞ք այս կարգավորումը վերաբերում է նշված երկու դեպքերին էլ:

Հաշվի առնելով վերոգրյալը և ելնելով նշված ինքնավար մարմինների կազմերի ձևավորման գործընթացում ընդդիմադիր խմբակցությունների մասնակցության իրավունքի լիարժեք իրացման անհրաժեշտությունից՝ առաջարկում ենք նախատեսել այնպիսի կարգավորում, որից կբխի, որ թեկնածու առաջադրելու իրավունքը, ըստ սահմանված հաջորդականության, կարող է անցնել այդ իրավունքն ունեցող հաջորդ մարմնին միայն այն դեպքում, երբ նախորդ մարմնի կողմից առաջադրած որևէ թեկնածու կընտրվի Ազգային ժողովի կողմից:

3. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածի 4-րդ մասով առաջարկվում է Օրենքի 20-րդ հոդվածի 3-րդ մասի առաջին նախադասությունը շարադրել նոր խմբագրությամբ: Նշված դրույթի հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք

«առնվազն երեք տարին» բառերից հետո լրացնել «ամբողջական կամ հանրագումարային» բառերը՝ հաշվի առնելով այն, որ հնարավոր է իրավիճակ, երբ, օրինակ՝ անձը ունենա ինչպես ղեկավարի, այնպես էլ տեղակալի և համակարգողի աշխատանքային ստաժ, ուստի այդ ստաժերի հանրագումարի արդյունքում է միայն ձևավորվում 3 տարվա ղեկավար պաշտոնների ստաժը: Նույն առաջարկը վերաբերում է նաև «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին հոդվածի 5-րդ մասով նախատեսվող նույնաբովանդակ կարգավորմանը:

2) 1-ին հոդվածը լրացնել 5-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ.

«5) 6-րդ մասը 1-ին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքում, երբ հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնն առաջացել է այդ պաշտոնը զբաղեցրած անդամի՝ հանձնաժողովի նախագահ նշանակվելու արդյունքում, ապա այդ թափուր պաշտոնում հանձնաժողովի նոր անդամը նշանակվում է հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածով:»:

Նշված իրավակարգավորումն անհրաժեշտ է օրենքի բացը լրացնելու և ռոտացիան պահպանելու նպատակով, քանի որ գործող օրենքով սահմանված չէ Հանձնաժողովի անդամի՝ Հանձնաժողովի նախագահ նշանակվելու արդյունքում առաջացած Հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնի պաշտոնավարման ժամանակահատվածը:

3) 4-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսվում է Օրենքի 30-րդ հոդվածը լրացնել նոր 13-րդ մասով, համաձայն որի՝ Հանձնաժողովն ապահովում է իր գործունեության հրապարակայնությունը և թափանցիկությունը զանգվածային լրատվամիջոցների, պաշտոնական ինտերնետային կայքի և այլ միջոցներով: Հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակում է իր ընդունած որոշումները:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ առևտրային, բանկային կամ ծառայողական գաղտնիք հանդիսացող տեղեկությունները, որոնք ստացված են սույն օրենքով տրված լիազորությունների կատարման ժամանակ, Հանձնաժողովի կողմից պահպանվում են օրենքով սահմանված կարգով: Բացի այդ, համաձայն Քաղաքացիական օրենսգրքի, «Պետական և ծառայողական գաղտնիքի մասին» օրենքի, «Անձնական տվյալների պաշտպանության մասին» օրենքի և այլ իրավական ակտերի պահանջների՝ Հանձնաժողովը պարտավոր է պահպանել անձնական տվյալների և այդ իրավական ակտերով սահմանված տեղեկությունների գաղտնիությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը՝ առաջարկում ենք Հանձնաժողովի որոշումների հրապարակման հետևյալ իրավակարգավորումը՝ «Հանձնաժողովն իր պաշտոնական ինտերնետային կայքում Հանձնաժողովի որոշմամբ սահմանված կարգով հրապարակում է իր ընդունած որոշումները՝ չներառելով օրենքով սահմանված հրապարակման ոչ ենթակա տեղեկությունները»:

4. «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի 1-ին մասով նախատեսվում է Օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասում «սույն» բառը փոխարինել ««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական» բառերով: Նշված փոփոխության փոխարեն առաջարկում ենք ՀՕ-249-Ն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասում «սույն օրենքով» բառերը փոխարինել ««Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքով» բառերով՝ հաշվի առնելով այն, որ նշյալ փոփոխությունը վերաբերում է բացառապես ՀՕ-249-Ն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված Հանձնաժողովի անդամների նշանակման կարգի իրավական հիմքին: Հակառակ պարագայում ստացվում է, որ «սույն» բառի՝ «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական» բառերով փոփոխությունը կվերաբերի նաև ՀՕ-249-Ն օրենքի 34-րդ հոդվածի 2-րդ մասի

սկզբում կիրառվող «սույն օրենքի ուժով» բառերին, ինչը կհանգեցնի սխալ իրավակարգավորման սահմանմանը:

5. «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ.

1) Հաշվի առնելով, որ ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողովի)՝ որպես ինքնավար մարմնի, առաջին կազմն արդեն իսկ ձևավորված է՝ առաջարկում ենք Նախագծի 1-ին հոդվածով՝ «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 7-րդ հոդվածի 2-րդ մասում չնախատեսել Հանձնաժողովի առաջին կազմի վերաբերյալ բացառություն՝ նշված մասից հանելով «հանձնաժողովի առաջին կազմի անդամների նշանակման, ինչպես նաև» բառերը: Նույն առաջարկությունը վերաբերում է նաև «Տնտեսական մրցակցության պաշտպանության մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով նախատեսվող նույնաբովանդակ կարգավորմանը:

2) Նախագծի 4-րդ հոդվածի 3-րդ մասով փոփոխվող՝ Օրենքի 11-րդ հոդվածի 11-րդ մասում «ընդունած» բառը փոխարինել «ընդունած՝ կարգավորվող անձանց և սպառողներին վերաբերող» բառերով:

3) Միաժամանակ առաջարկում ենք Օրենքի 7-րդ հոդվածի 6-րդ մասը 1-ին նախադասությունից հետո լրացնել նոր նախադասություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Այն դեպքում, երբ հանձնաժողովի անդամի թափուր պաշտոնն առաջացել է այդ պաշտոնը զբաղեցրած անդամի՝ հանձնաժողովի նախագահ նշանակվելու արդյունքում, ապա այդ թափուր պաշտոնում հանձնաժողովի նոր անդամը նշանակվում է հանձնաժողովի նախագահի պաշտոնավարման չլրացած ժամկետի մնացած ժամանակահատվածով»:

6. «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի՝

1) 3-րդ հոդվածի 1-ին և 4-րդ մասերում «հանել» բառը փոխարինել «ուժը կորցրած ճանաչել» բառերով:

2) 6-րդ և 7-րդ հոդվածներով, համապատասխանաբար, առաջարկվում է ընդլայնել Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) գործառույթների և լիազորությունների շրջանակը: Մասնավորապես, Նախագծով առաջարկվում է Հանձնաժողովին վերապահել **իր կողմից մշակված** հակակոռուպցիոն ծրագրերի և միջոցառումների կատարման նկատմամբ մոնիթորինգի իրականացման և դրանց վերաբերյալ իրավասու մարմիններին առաջարկությունների ներկայացման իրավասության: Այս կապակցությամբ գտնում ենք, որ Հանձնաժողովի՝ նախատեսվող իրավասության շրջանակը բավականին նեղ է և չի բխում հակակոռուպցիոն քաղաքականության ընդհանուր տրամաբանությունից: Մոնիթորինգի ինստիտուցիոնալ հենքի կայացման տեսանկյունից կարևորվում է անկախության երաշխիքներով օժտված կոռուպցիայի կանխարգելման մարմին՝ ինչպիսին և հանդիսանում է Հանձնաժողովը, վերապահել **պետության կողմից մշակված հակակոռուպցիոն ծրագրերի նկատմամբ** մոնիթորինգի իրականացման իրավասությունը:

Վերոգրյալի համատեքստում առաջարկում ենք Նախագծի 6-րդ և 7-րդ հոդվածներով համապատասխանաբար լրացվող 23-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետից և 24-րդ հոդվածի 1-ին մասի 19-րդ կետից հանել «իր կողմից մշակված» բառակապակցությունը:

3) 6-րդ հոդվածով լրացվող 23-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով սահմանվում է, որ Հանձնաժողովը «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության վերաբերյալ ներկայացնում է խորհրդատվական բնույթի եզրակացություններ: Նախագծի 7-րդ հոդվածով լրացվող 24-րդ հոդվածի 1-ին մասի 20-րդ կետով Հանձնաժողովին տրվում է տվյալ գործառույթի իրագործման նպատակով ուսումնասիրություններ կատարելու և խորհրդատվական բնույթի եզրակացություններ տրամադրելու լիազորություն: Մինչդեռ Նախագծով սահմանված ուսումնասիրությունների իրականացման և

Եզրակացությունների տրամադրման կարգ սահմանված չէ: Ուստի, հաշվի առնելով Հանձնաժողովի ձևավորման հրատապությունը, օրենսդրական փաթեթի ընդունման ժամկետի սղությունը և միաժամանակ կարևորելով վերոնշյալ կառուցակարգերի սահմանման անհրաժեշտությունը՝ առաջարկում ենք Նախագծով սահմանել, որ «Հանրային ծառայության մասին» օրենքով սահմանված դեպքերում և կարգով պետական պաշտոններում նշանակման ենթակա անձանց բարեվարքության, կոռուպցիոն գործարքներում ներգրավվածության վերաբերյալ ուսումնասիրությունների իրականացման և դրանց արդյունքներով խորհրդատվական բնույթի եզրակացությունների ներկայացման կարգը սահմանում է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը:

7. «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծում «ինքնավար պետական մարմնի նախագահ» և «ինքնավար պետական մարմնի անդամ» բառերը համապատասխանաբար, փոխարինել «ինքնավար մարմնի նախագահ» և «ինքնավար մարմնի նախագահ» բառերով՝ նկատի ունենալով Սահմանադրության 122-րդ հոդվածի իրավակարգավորումները:

8. Միևնույն ժամանակ, հաշվի առնելով նախագծերի փաթեթի հակակոռուպցիոն նշանակությունը և դրա վերաբերյալ հանրային հետաքրքրվածությունը՝ գտնում ենք, որ նախագծերի փաթեթն անհրաժեշտ է ընդունել միայն հանրային լայն քննարկման արդյունքում:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱԶԱՆՅԱՆ